2021, № 1, 3-15 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.1.003

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄԿՈՒՐՍԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (1999-2015 ԹԹ.)

ՄԱՐՏԻՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Հայոց ցեղասպանության թեման հայ-գերմանական հարաբերություններում հատուկ նշանակություն ունի և միշտ էլ եղել է տարբեր հարթակներում բուռն քննարկման առարկա: Թեմայի ուսումնասիրության առանցքում խորհրդարանական հարթակում Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ քննարկումներն են: Մինչև 2010-ական թվականները Գերմանիայի իշխող շրջանակները Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ հիմնականում տալիս էին ավանդական դարձած պատասխաններ՝ ձեռնպահ մնալով հստակ ձևակերպումներից՝ պայմանավորված թուրք-գերմանական դաշնակցային հարաբերություններով: Սակայն աստիճանաբար գերմանական հանրության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի քննարկումներում պարբերաբար խոսվում էր նաև Գերմանիայի համապատասխանատվության մասին, որն արծարծվեց նաև մի շարք աշխատություններում, մասնավորապես՝ Յուրգեն Գոտշլիխի «Օգնություն ցեղասպանությանը. Գերմանիայի դերը հայերի բնաջնջման ժամանակ» աշխատությունում[1]: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայոց ցեղասպանության վերաբերյալ Գերմանիայի ներքաղաքական դիսկուրսում կատարված քննարկումները կարող ենք պայմանականորեն բաժանել երեք փուլերի:

Առաջին փուլը մեկնարկել է դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հարցի առաջին խորհրդարանական քննարկումը Գերմանիայում տեղի է ունեցել 1916 թ.: Մինչ այդ Ռայխսթագի պատգամավոր, հետագայում Գերմանիայի կոմունիստական կուսակցության հիմնադիր Կարլ Լիբկնեխթը 1915 թ. դեկտեմբերին գրավոր հարցումով դիմել էր ռայխսկանցլերին, թե «արդյո՞ք ռայխսկանցլերը տեղյակ է, որ ներկայումս ընթացող պատերազմում դաշնակից թուրքական կայսրությունում հայ բնակչությունը հարյուրհազարներով իր բնակատեղիներից վտարվում և ոչնչացվում է, և ի՞նչ քայլեր է ձեռնարկել պարոն ռայխսկանցլերը, որպեսզի դաշնակից թուրքական իշխանության մեջ արթնանա ապաշխարելու անհրաժեշտություն, և որ հայ ժողովրդի մնացյալ հատ-

[1] Տե՛ս Beihilfe zum Völkermord: Deutschlands Rolle bei der Vernichtung der Armenier Gebundenes Buch, Links Verlag, 344 Seite, Berlin, 2015.

վածի դրությունը Թուրքիայում մարդկային արժանապատվությանը վայել կարգավորվի՛ ու նման արհավիրքների կրկնությունը կանխվի»[2]:

1916 թ. հունվարի 11-ի նիստում կայզերական դեսպանորդ, արտաքին գերատեսչության քաղաքական բաժնի խմբի ղեկավար դոկտոր ֆոն Շտումը հաստատեց, որ ռայխսկանցլերը քաջատեղյակ է այդ իրադարձություններին: «Բարձր դուռը, հակառակորդի խռովարար խարդավանքներից ելնելով, ստիպված է հայ բնակչությանը թուրքական տիրապետության որոշ տարածքներից տեղահանել և նրանց նոր բնակավայրեր ուղարկել: Վերոհիշյալ միջոցառումների պատճառով որոշակի հետևանքների առաջացումն այժմ գերմանական ու թուրքական կառավարությունների միջև մտքերի փոխանակման առիթ է դարձել: Մանրամասները տեղեկացման ենթակա չեն»[3]: Լիբկնեխթը փորձեց լրացնող հարց ավելացնել. «Արդյոք տեղյա՞կ է պարոն ռայխսկանցլերը, որ պրոֆեսոր Լեփսիուսն ուղղակիորեն խոսում է թուրքահայերի բնաջնջման մասին…»[4]: Նախագահի նախաձեռնությամբ հարցի քննարկումը կիսատ մնաց՝ Ռայխսթագի անդամների ծափահարությունների պատճառով: Այսպիսով վերջակետ դրվեց Հայոց ցեղասպանության հետագա քննարկումներին, և դրանից հետո տասնամյակներ շարունակ Հայոց ցեղասպանության թեման դուրս մնաց գերմանական քաղաքական օրակարգից:

Հայոց ցեղասպանության ճանաչումը Գերմանիայի Բունդեսթագում առաջին անգամ ձեռնարկեց Բրեմենի համալսարանի պրոֆեսոր, ցեղասպանագետ Գունար Հայնզոհնը 1999 թ. մարտին: Հայնզոհնը հրապարակեց բանաձևի նախագիծ՝ «Բունդեսթագի բանաձևի նախնական տարբերակ. 1915 թ. Հայոց ցեղասպանությունը և հայ-թուրքական հարաբերությունների սերտացումը» վերնագրով[5]: Բանաձևում նշվում էին Կայզերական Գերմանիայի դերն ու նշանակությունը Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին և մեր օրերում՝ դրանից բխող բացառիկ կարևորությունը Հայաստանի և Թուրքիայի միջև երկխոսության համապատկերում:

2000 թ. ապրիլի 13-ին Գերմանիայի Բունդեսթագի խնդրագրերի հանձնաժողովին ներկայացվեց «Ժամանակն է դատապարտելու ցեղասպանությունը»[6] վերնագրով խնդրագիրը: Այս ձեռնարկի հեղինակ-

---

[2] Deutscher Reichstag, Anfrage Nr. 12, Nr. 187, Archiv des Deutschen Bundestages, 20.12.1915.

[3] Verhandlungen des Reichstags, XIII Legislaturperiode, Band 306, Stenographische Berichte, Von der Eröffnungssitzung am 4. August 1914 bis zur 34- Sitzung 1916, Archiv des Deutschen Bundestages, Berlin 1916.

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս Gunnar Heinsohn, 1. Entwurf für eine Resolution des Deutschen Bundestages: Der Genozid am armenischen Volk von 1915 und die Verbesserung der türkisch-armenischen Beziehungen, հասանելի է՝ http://www.deutscharmenischegesellschaft.de/materialien/der-genozid-an-den-armeniern/vor-dem-deutschen-bundestag2/1-entwurf-fur-eine-resolution-des-deutschen-bundestages (մուտք՝ 12.07.2018):

[6] Petitionsantrag April 2000, Es ist Zeit: Völkermord verurteilen, հասանելի է՝ http://www.deutscharmenischegesellschaft.de/materialien/der-genozid-an-den-armeniern/vor-dem-deutschen-bundestag2/petitionsantrag-april-2000/ (մուտք՝ 12.07.2018):

ներն էին Գերմանիայում գործող չորս կազմակերպություններ՝ Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, Տեղեկատվական և փաստագրական կենտրոնը, Հայկական հարցերի ինստիտուտը և Վտանգված ազգերի միության՝ Հայոց ցեղասպանության հարցերով հանձնախումբը: Բացի սույն կազմակերպություններից՝ խնդրագրին կցվել էր Ֆրանկֆուրտում գործող թուրքական «Ցեղասպանության հակառակորդների միության» անցկացրած ստորագրահավաքը: Այդ խնդրագրի տակ ստորագրեցին Գերմանիայի 16.000 քաղաքացիներ[7]: Դրա հիմնական պահանջներն էին՝ ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը և ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա՝ ճանաչելու ցեղասպանության իրողությունը: Խնդրագրերի հանձնաժողովը Բունդեսթագին առաջարկեց խնդրագիրը փոխանցել արտաքին գործերի նախարարություն: Հանձնաժողովի այս առաջարկի հիմնավորումից դրա հետագա գնահատականը պարզ էր: Հանձնաժողովի բացատրության մեջ մասնավորապես ասվում էր. «Լիովին հասկանալի է, թե 1915-1917 թթ. ողբերգական իրադարձությունները ինչ նշանակություն ունեն հայ ժողովրդի համար, և ողջունելի է այս պատմական իրադարձությունների ցանկացած գնահատում, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերքերը ոչ թե թարմացնել, այլ բուժել է պետք»[8]:

Մինչ արտաքին գործերի նախարարությունը կպատասխաներ խնդրագրին, Գերմանիայի խորհրդարանի PDS (Partei des Demokratischen Sozialismus, հայերեն՝ Ժողովրդավարական սոցիալիզմի կուսակցություն) խմբակցությունը 2001 թ. փետրվարին Գերմանիայի կառավարությանը ներկայացրեց գրավոր հարցում Թուրքիայում 2000 թ. դեկտեմբերին սիրիացի ուղղափառ քահանայի ազատազրկման կապակցությամբ՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ դիրքորոշման պատճառով[9]: Կուսակցությունը հարցնում էր, թե արդյոք Գերմանիայի Դաշնությունը մտադիր չէ մոտ ապագայում քայլեր ձեռնարկել ճանաչելու Հայոց ցեղասպանությունը՝ հաշվի առնելով Ռայխստագի մեղսակցությունն այդ ողբերգությանը: Կառավարությունը պատասխանեց. «Դաշնային կառավարությունն այն տեսակետին է, որ հայկական 1915-16 թթ. ջարդերի գնահատման հարցը հիմնականում պատմական հարց է և, հետևաբար, պատմագիտության ուսումնասիրման առարկա, իսկ առաջին հերթին՝ Հայաստանի և Թուրքիայի խնդիրը»[10]:

---

[7] Տե՛ս Petition, Es ist Zeit: Völkermord verurteilen, հասանելի է՝ http://www.avantart.com /armenia/petition.html (մուտք՝ 14.07.2018):

[8] Beschlussempfehlung, Prot. Nr. 14/49, հասանելի է՝ http://www.Deutsch armenischegesellschaft.de/wp-content/uploads/2011/10/Beschluss-des-Deutschen-Bundestages-vom-05.-April-2001-zum-Petitionsverfahren.pdf (մուտք՝ 17.07.2018):

[9] Տե՛ս Kleine Anfrage der Fraktion der PDS, Strafrechtliche Verfolgung eines syrisch-orthodoxen Pfarrers in der Türkei wegen Äußerungen zum Völkermord an den Armeniern, Drucksache 14/5366, 13.02.2001, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de /doc/btd/14/053/ 1405366.pdf (մուտք՝ 12.07.2018):

[10] Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage (Drucksache 14/5366), Drucksache14/5540, 13.03.2001, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de/doc/btd/14/055/1405540.pdf (մուտք՝ 17.07.2018):

Կարճ ժամանակ հետո հրապարակվեց նաև Գերմանիայի արտգործնախարարության պատասխանը խնդրագրի կապակցությամբ. թուրքական կողմն արդեն իսկ քայլեր է ձեռնարկում հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ուղղությամբ, և ոչ պաշտոնական թուրքական աղբյուրներից խնդրել են այս նուրբ հարցի քննարկմանը զգուշությամբ մոտենալ[11]: Սրանով կառավարությունը փակված համարեց խնդրագրի քննարկումը: Հատկանշական է, որ այս երկու պատասխաններում բացակայում է «ցեղասպանություն» եզրը. փոխարենը կիրառվում է թուրքական կառավարության կողմից օգտագործվող ձևակերպումները՝ «աղետալի իրադարձություններ»[12], «ջարդ»[13], «հայերի ոչնչացում»[14]: Կառավարության նման խուսափողական մոտեցումը հիմնվում էր այն հանգամանքի վրա, որ 2001 թ. ստեղծվել էր հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողով, և առավել նպատակահարմար էր գտնում՝ Հայաստանը և Թուրքիան իրենք հարթեն իրենց հարաբերությունները:

Սակայն Գերմանիայի կառավարությունը 2002 թ. օգոստոսին Ժողովրդավարական սոցիալիզմի կուսակցության խմբակցության նոր գրավոր հարցման հիման վրա ստիպված կրկին անդրադարձավ 2000 թ. խնդրագրին: Այստեղ նշվում էր, որ արտգործնախարարության կողմից խրախուսվող հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի գործողությունները փակուղի են մտել, և Գերմանիան կրկին կանգնած է Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի առաջ[15]: Կառավարության պատասխանը կրկնում էր նախկինում որդեգրած դիրքորոշումը. «Անցյալի հաղթահարումը առաջին հերթին Հայաստանի և Թուրքիայի խնդիրն է: Դաշնային կառավարությունը ողջունում է կողմերի ցանկացած նախաձեռնություն, որն ուղղված կլինի հարաբերությունների կարգավորմանը»[16]:

Այս փուլում կարևոր է նաև նշել Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջ քաղաքական որոշ գործիչների առանձին նախաձեռնությունները

---

[11] Տե՛ս Antwort des Auswärtigen Amtes, 10.10.2001, հասանելի է՝ http://www. deutscharmenischegesellschaft.de/wp-content/uploads/2011/09/DEUTSCHER-BUNDESTAG-Petitionsausschuss-Zur-Unterrichtung-der-Medien-auf-Anfrage-20011010.pdf (մուտք՝ 22.07.2018):

[12] Beschlussempfehlung, Prot. Nr. 14/49, հասանելի է՝ http://www.deutsch armenischegesellschaft.de/wp-content/uploads/2011/10/Beschluss-des-Deutschen-Bundestages-vom-05.-April-2001-zum-Petitionsverfahren.pdf (մուտք՝ 22.07.2018):

[13] Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage (Drucksache 14/5366), Drucksache 14/5540, 13. 03. 2001, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de/doc/btd/14/055/1405540.pdf հասանելի՝ 05.03.2015. Beschlussempfehlung, Prot. Nr. 14/49, http://www.deutsch armenischegesellschaft.de/wp-content/uploads/2011/10/ Beschluss-des-Deutschen-Bundestages-vom-05.-April-2001-zum-Petitionsverfahren.pdf (մուտք՝ 22.07.2018):

[14] Beschlussempfehlung, Prot. Nr. 14/49, հասանելի է՝ http://www.deutsch armenischegesellschaft.de/wp-content/uploads/2011/10/Beschluss-des-Deutschen-Bundestages-vom-05.-April-2001-zum-Petitionsverfahren.pdf (մուտք՝ 22.07.2018):

[15] Տե՛ս Kleine Anfrage der Fraktion der PDS, Anerkennung des Völkermordes an den Armeniern, Drucksache 14/9857, 12. 08. 2002, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de/doc/btd/14/098/1409857.pdf (մուտք՝ 25.07.2018):

[16] Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage (Drucksache 14/9857), Drucksache 14/9921, 03.09.2002, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de/doc/btd/14/099/1409921.pdf (մուտք՝ 24.07.2018):

ները: 2000 թ. խնդրագրից հետո Գերմանիայի Դաշնային Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ բազմաթիվ քաղաքական գործիչներ սկսեցին իրենց կարծիքը արտահայտել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի վերաբերյալ: Ժողովրդավարական սոցիալիզմի կուսակցության խմբակցության պատգամավոր Ուվե Հիկշը 2001 թ. մայիսին Գերմանիայի Բունդեսթագի բոլոր պատգամավորներին գրություն ուղարկեց, որում մանրամասն ներկայացնում էր Հայոց ցեղասպանության պատմական փաստերը[17]: Գրությանը կից պատգամավորն իր գործընկերներին էր ներկայացնում Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի նախագիծ[18]: SPD (Sozialdemokratische Partei, հայերեն՝ Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն) խմբակցության ղեկավար Գերնոթ Էրլերը խմբակցության իր գործընկերներին համապատասխան նամակով շտապեց տեղեկացնել, որ, համաձայն խմբակցության ղեկավար խորհրդի նիստի, որոշում է կայացվել պատգամավոր Ուվե Հիկշի ներկայացրած բանաձևի նախագծին դեմ քվեարկել: Էրլերը պատճառաբանում էր, որ Կայզերական Գերմանիան մեղավորության իր բաժինն ունի Հայոց ցեղասպանության մեջ, սակայն զգուշացնում էր, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը կարող է առաջ բերել նաև անցյալ դարի այլ ջարդերի քննարկումներ, որոնք անմիջականորեն կապված են եվրոպական գաղութատիրական քաղաքականության հետ[19]: FDP (Freie Demokratische Partei, հայերեն՝ Ազատ դեմոկրատական կուսակցություն) խմբակցության նախագահ Վոլֆգանգ Գերհարդը նույնպես քննադատաբար էր մոտենում Գերմանիայի մեղսակցության տեսակետին և նպատակահարմար չէր համարում նախորդ դարի պատմական իրադարձությունները գերմանական քաղաքականության օրակարգ մտցնել[20]: Բունդեսթագի Կանաչների կուսակցության ներքաղաքական հարցերով խոսնակ, ծագումով թուրք Ջեմ Օզդեմիրն իր գործընկերներին կոչ արեց. «… թույլ չտանք, որ մեր «արիության» համար Թուրքիայում ապրող հայերը կամ այլ քրիստոնյաներ վճարեն»[21]: Այնուհան-

---

[17] Տե՛ս Uwe Hiksch, MdB Anschreiben an die Abgeordneten des Deutschen Bundestages, 31.05.2001, հասանելի է՝ http://www.deutsch armenischegesellschaft.de/materialien/der-genozid-an-den-armeniern/vor-dem-deutschenbundestag2/uwe-hiksch-mdb-anschreiben-an-die-abgeordneten-des-deutschen-bundestages/ (մուտք՝ 24.07.2018):

[18] Տե՛ս Uwe Hiksch, Entwurf für einen Gruppenantrag, Genozid an Armeniern anerkennen! 31.05.2001, հասանելի է՝ http://www. deutscharmenischegesellschaft.de/materialien/der-genozid-an-den-armeniern/vor-dem-deutschen-bundestag2/entwurf-fur-einen-gruppenantrag/ (մուտք՝ 12.07.2018):

[19] Տե՛ս Gernot Erler, an die Mitglieder der SPD-Bundestagsfraktion, 08.06.2001, հասանելի է՝ http://www.deutscharmenische gesellschaft.de/wp-content/uploads/2009/11/Erler-zur-Petition-im-Bundestag-20010805.pdf (մուտք՝ 25.07.2018):

[20] Տե՛ս Dr. Wolfgang **Gerhardt,** Schreiben an die DAG, 22.08.2001, հասանելի է՝ http://www.deutscharmenischegesellschaft.de/materialien/der-genozid-an-den-armeniern/vor-dem-deutschen-bundestag2/324-2/ (մուտք՝ 25.07.2018):

[21] Langer Gang am Bosporus: Was gegen eine Armenien-Resolution spricht, հասանելի է՝ http://fazarchiv.faz,net/?q=was+gegen+eine+armenier+resolution+spricht&search_in=q&timePeriod=timeFilter&timeFilter=&DT_from=&DT_to=&KO=&crxdefs=&NN=&CO=&CN=&BC=&submitSearch=Suchen&sext=0&maxHits=&sorting=&toggleFilter=&dosearch=new#hitlist (մուտք՝ 27.07.2018):

դերձ, Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության համատեքստում նրա հետ երկկողմ հանդիպումների ժամանակ գերմանական քաղաքական շրջանակները հաճախ էին հնչեցնում նույն տեսակետը, որ հենց երկու երկրների միջև առկա բարեկամական հարաբերությունները պարտավորեցնում են նաև տհաճ թեմաների մասին բաց խոսել[22], իրական «եվրոպական հասունացումը» ենթադրում է սեփական անցյալին քննադատաբար մոտենալ[23], պատմության մութ էջերին անդրադառնալ[24]:

Ամփոփելով կարելի է փաստել, որ Գերմանիան դեռևս Հայոց ցեղասպանության տարիներին քաջատեղյակ է եղել դաշնակից Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի հանդեպ տարվող բնաջնջման քաղաքականության մասին, սակայն շուրջ 85 տարի պահանջվեց, որպեսզի այս թեման կրկին գերմանական խորհրդարանականների քննարկման առարկա դառնա: Չնայած առանձին խմբակցություններից հնչող խուսափողական կարծիքներին՝ այն ամուր հող նախապատրաստեց հաջորդ փուլի գործընթացների համար:

Երկրորդ փուլի սկիզբը կարելի է համարել 2004 թ. ապրիլի 22-ը, երբ Գերմանիայի արտգործնախարար Յոշկա Ֆիշերը Հայաստան կատարած այցի ընթացքում Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Դա գերմանական կառավարության առաջին ներկայացուցչի այցն էր հուշահամալիր, ինչն ազդակ էր, որ Հայոց ցեղասպանության նկատմամբ գերմանական դիրքորոշումը թևակոխում է նոր փուլ:

Նույն թվականին Գերմանիայի Բրանդենբուրգի երկրամասի 9-րդ և 10-րդ դասարանների պատմության դպրոցական դասագրքերում ընդգրկվեց Հայոց ցեղասպանության թեման: «Պատերազմ-տեխնիկա-քաղաքակրթություն» վերնագրի ներքո խոսվում էր նաև ցեղասպանության երևույթի մասին, որտեղ «ցեղասպանություն» բառից հետո փակագծերում որպես օրինակ էր բերվում «Փոքր Ասիայում հայկական բնակչության ցեղասպանությունը»[25]:

Այս կապակցությամբ Գերմանիայում Թուրքիայի Հանրապետության գլխավոր հյուպատոս Այդին Դուրուսոյը շտապ հանդիպում ունեցավ Բրանդենբուրգ երկրամասի ղեկավար Մաթիաս Փլաթցեկի և մարզի կրթության նախարար Հոլգեր Ռուպրեխթի հետ, որից հետո առանց որևէ պաշտոնական բացատրության դասագրքերի ինտերնետա-

---

[22] Տե՛ս Helmut Kohl, Bulletin Nr.47, 04.06.1993, հասանելի է՝ http://www.kas.de/upload/dokumente/2013/05/130529_Regierungserklaerung_Kohl_16061993.pdf (մուտք՝ 12.08.2018):

[23] Տե՛ս Gernot Erler, an die Mitglieder der SPD-Bundestagsfraktion, 08.06.2001, հասանելի է՝ http://www.deutscharmenische gesellschaft.de/wp-content/uploads/2009/11/Erler-zur-Petition-im-Bundestag-20010805.pdf (մուտք՝ 12.08.2018):

[24] Տե՛ս Dr. Wolfgang Gerhardt, Schreiben an die DAG, 22.08.2001, հասանելի է՝ http://www.deutscharmenischegesellschaft.de/materialien/der-genozid-an-den-armeniern/vor-dem-deutschen-bundestag2/324-2/ (մուտք՝ 12.08.2018):

[25] Völkermord an Armeniern vom Lehrplan genommen, 25.01.2005, հասանելի է՝ http://www.faz.net/aktuell/feuilleton/brandenburg-voelkermord-an-armeniern-vom-lehrplan-genommen-208914.html (մուտք՝ 15.08.2018):

յին տարբերակից հանվեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ հատվածը: Բրանդենբուրգի երկրամասի այս որոշումը չվրիպեց լրատվամիջոցների աչքից: «Թագեսցայթունգ» (Tageszeitung) թերթին տրված հարցազրույցում Քրիստոնյա-դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղար Սվեն Պետկեն նշեց, որ այնպիսի տպավորություն է ստանում, թե Բրանդենբուրգի աշակերտների դասագրքերը Անկարայում են գրվում[26]: Ազատ դեմոկրատական կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Քորնելիա Փիփերը այս քայլը որակեց «պատմության կեղծարարություն՝ Թուրքիայի խնդրանքով»[27]:

2005 թ. հունվարի 26-ին Բրանդենբուրգի երկրամասի կառավարությունը հայտարարեց, որ Հայոց ցեղասպանության թեմայի ջնջվելը սխալմունք է[28]: 2005-2006 թթ. ուսումնական տարվա սկզբին Հայոց ցեղասպանության թեման ոչ միայն մնաց դպրոցական դասագրքերում, այլ նաև լրացուցիչ ընթերցանության համար նախատեսված դասագրքի մի ամբողջ գլխում մանրամասն ներկայացվում էր Հայոց ցեղասպանության պատմությունը:

Բրանդենբուրգի երկրամասի պատմության դասագրքերի շուրջ ծավալված աղմուկին զուգահեռ՝ Քրիստոնյա-դեմոկրատական խմբակցության պատգամավոր Քրիստոֆ Բերգները 2005 թ. փետրվարի 22-ին Բունդեսթագի Քրիստոնյա-դեմոկրատական և Քրիստոնյա-սոցիալիստական խմբակցությանը ներկայացրեց «1915 թ. ապրիլի 24-ի հայերի տեղահանության և ջարդի 90-ամյակի ոգեկոչում. Գերմանիան պետք է աջակցի թուրքերի և հայերի միջև երկխոսությանը» վերնագրով բանաձևի նախագիծ, որտեղ մանրամասն նկարագրվում էին Հայոց ցեղասպանության բոլոր պատմական հիմքերը և գերմանական ռայխի դերը այդ իրադարձություններում, բացակայում էր «ցեղասպանություն» եզրը, որի փոխարեն կիրառվում էին «աքսոր և ջարդեր» բառերը: Միայն մի տեղ նշվում է, որ «բազմաթիվ անկախ պատմաբաններ հայերի աքսորը և ոչնչացումը որակել են որպես ցեղասպանություն»[29]:

Բանաձևում շեշտվում էր, որ Թուրքիայի Հանրապետությունը մինչ օրս մերժում է, որ տեղահանությունների հիմքում ընկած է եղել նախապես մշակված ծրագիր, որը հանգեցրել է աքսորյալների բնաջնջմանը:

---

[26] Տե՛ս Der Konsul schreibt, Brandenburg spurt: Türkische Diplomaten sorgen sich um deutsche Lehrpläne - und lassen den armenischen Genozid verschwinden, 26.01. 2005, հասանելի է՝ http://www.taz.de/1/archiv/?dig=2005/01/26/a0104 (մուտք՝ 15.08.2018):

[27] Völkermord an Armeniern nicht mehr im Lehrplan, 25.01.2005, հասանելի է՝ http://www. mz-web.de/politik/brandenburg-voelkermord-an-armeniern-nicht-mehr-im-lehrplan,20642162,19321498.html (մուտք՝ 15.08.2018):

[28] Տե՛ս Sie wissen ja, es gab das Abendessen, 27.01.2005, հասանելի է՝ http://www.pnn.de/brandenburg-berlin/88223/ (մուտք՝ 15.08.2018):

[29] Antrag der CDU/CSU Fraktion, Gedenken anlässlich des 90. Jahrestages des Auftakts zu Vertreibungen und Massakern an den Armeniern am 24. April 1915 – Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen, Drucksache 15/4933, 22.02.2005, հասանելի է՝ http://www.bergner.de/files/Antrag%20Armenien%201504 933.pdf (մուտք՝ 15.08.2018):

Բանաձևում ընդգծվում էր սեփական պատմության հետ ազատ առերեսվելու կարողությունը, ինչը կարևոր նախապայման է Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բարելավման համար, որն իր հերթին կարող է նպաստել տարածաշրջանում կայունության հաստատմանը: Բանաձևի դեռևս նախագծային տարբերակի շուրջ թուրքական արձագանքը շատ ուժեղ էր: Թուրք նախկին դիվանագետ Գունդուզ Ակթանը գերմանացիներին զգուշացրեց, որ նման քայլով նրանք հավասարեցնում են Հոլոքոստը և «հայկական դեպքերը» և այս կերպ հրեաների ցեղասպանության եզակիությունը կասկած տակ են դնում[30]:

2005 թ. ապրիլի 21-ին Գերմանիայի Բունդեսթագում տեղի ունեցավ բանաձևի քննարկումը: Նախագծի հեղինակ, Քրիստոնյա-դեմոկրատական խմբակցության պատգամավոր Քրիստոֆ Բերգները, մեջբերելով գերմանացի դիվանագետների գրառումները, քննադատեց գերմանական ռայխի կրավորական պահվածքը. «Լռելու պատճառով է, որ այսօր Գերմանիայի Դաշնությունն ունի առանձնահատուկ դեր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում»[31]: Իսկ Կանաչների կուսակցության պատգամավոր Ֆրից Քունը իր խմբակցության անունից ներողություն խնդրեց հայ ժողովրդից: Խորհրդարանականները հաստատում էին, որ այս բանաձևում թուրքատյացության հիմք չպետք է փնտրել, ավելին՝ այն նպատակաուղղված է աջակցելու Թուրքիային՝ մաս դառնալու եվրոպական հիշողության մշակույթին և քննադատաբար մոտենալու սեփական պատմությանը: Հատկանշական է այն փաստը, որ ելույթ ունեցող բոլոր խորհրդարանականները անկաշկանդ կիրառում էին «ցեղասպանություն» եզրը, ինչը բացակայում էր բանաձևի նախագծի տեքստում:

2005 թ. հունիսի 16-ին առանց նոր քննարկման Գերմանիայի Բունդեսթագը ընդունեց բանաձև՝ «Հիշել և ոգեկոչել 1915 թ. հայերի տեղահանությունները և ջարդերը. Գերմանիան պետք է աջակցի թուրքերի և հայերի միջև երկխոսությանը»[32]: Այս տարբերակում ևս գործածվում էին «աքսոր» և «ջարդեր» բառերը: Թուրքիայի արտգործնախարար Աբդուլա Գյուլը Բունդեսթագի բանաձևը որակեց իր երկրի դեմ ուղղված էժանագին մեղադրանք[33]: Գերմանիայի՝ ազգությամբ թուրք շուրջ 130.000 քաղաքացիներ ստորագրահավաքի միջոցով խնդրագիր ներկայացրին Գերմանիայի Բունդեսթագի խնդրագրերի հանձնաժողովին, որում պահանջում էին չեղյալ համարել բանաձևը, սակայն հանձնաժո-

---

[30] Տե՛ս Germany's Responsibility, 05.03.2005, հասանելի է՝ http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=germanys-responsibility-2005-03-05 (մուտք՝ 15.08.2018):

[31] Նույն տեղում:

[32] Antrag der Fraktionen SPD, CDU/CSU, BÜNDNIS 90/DIE GRÜNEN und FDP, Erinnerung und Gedenken an die Vertreibungen und Massaker an den Armeniern 1915 – Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen, Drucksache 15/5689, 15.06.2005, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de/doc/btd/15/056/1505689.pdf (մուտք՝ 18.08.2018):

[33] Տե՛ս Bundestag gedenkt der Armenier, 16.06.2005, հասանելի է՝ http://www.tagesspiegel.de/politik/bundestag-gedenkt-der-armenier/616688.html (մուտք՝ 18.08.2018):

ղովը մերժեց, քանի որ Գերմանիայի Բունդեսթագի բոլոր խմբակցություններն արդեն իսկ միաձայն հավանություն էին տվել, և այն անբեկանելի էր[34]: Բանաձևում «ցեղասպանություն» եզրույթից խուսափելը քննադատվեց հայկական կազմակերպությունների (Գերմանահայոց կենտրոնական խորհուրդ, Գերմանիայի հայ ակադեմիկոսների միություն), ինչպես նաև անվանի պատմաբաններ և քաղաքագետներ Թեսա Հոֆմանի, Վոլֆգանգ Բենցի, Օտտո Լուխթերհանդի և այլոց կողմից: Բունդեսթագի այս որոշման նշանակությունն այն է, որ առաջին անգամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության բարձր կառույցը պաշտոնական բացատրություն էր տալիս Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած պատմական իրադարձություններին, ինչպես նաև բարձրաձայնվում էր գերմանական ռայխի դերը այս իրադարձություններում[35]:

Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը բարձրացնելու գործը Գերմանիայի Բունդեսթագում 2006-2015 թթ. ստանձնեց հիմնականում Բունդեսթագի Կոմունիստական կուսակցությունը՝ ձախերը (Die Linke): Նրանց խմբակցությունը Բունդեսթագի 16-րդ գումարման ընթացքում՝ 2007 թ. մարտին, գրավոր հարցում ուղղեց կառավարությանը՝ պարզելու, թե Գերմանիայի կառավարությունը ինչ քայլեր է ձեռնարկում Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մեջ Գերմանիայի բաժին մեղավորությունը քավելու համար[36]: Կառավարության պատասխանը զարմանալիորեն կրկնում էր մինչ 2005 թ. դիրքորոշումը. «Գերմանական ռայխի դերը Օսմանյան կայսրությունում 1915-16 թվականների իրադարձությունների ժամանակ դեռևս վերջնականապես ուսումնասիրված չէ: Կառավարությունը ողջունում է բոլոր ձեռնարկումները, որոնք ուղղված կլինեն այս պատմական իրադարձությունների ուսումնասիրմանը՝ մեկ անգամ ևս շեշտելով, որ այս իրադարձությունների գնահատումը պատմաբանների խնդիրն է»[37]: Պարզ էր, որ Գերմանիան կրկին խուսանավում էր Հայոց ցեղասպանության լիարժեք ճանաչման և գնահատման հարցում:

2008 թ. Գերմանիայի Դաշնության բյուջեից 800.000 եվրո տրամադրվեց, որպեսզի Պոտսդամ քաղաքում վերանորոգվի Օսմանյան կայսրությունում գերմանացի միսիոներ Յոհաննես Լեփսիուսի տունը:

---

[34] Տե՛ս Deutscher Bundestag, Bericht des Petitionsausschusses (2. Ausschuss), Bitten und Beschwerden an den Deutschen Bundestag, Die Tätigkeit des Petitionsausschusses des Deutschen Bundestages im Jahr 2005, Drucksache 16/2500, 19. 09. 2006, S. 14-15, հասանելի է՝ http://dip21.bundestag.de/dip21/btd/16/025/1602500.pdf (մուտք՝ 15.08.2018):

[35] Տե՛ս **Robel Y**., Erinnern als europäischer Standard? Deutsche Perspektiven auf den Genozid an Armeniern, *Formen und Funktionen sozialen Erinnerns: Sozial- und kulturwissenschaftliche Analysen*, Lehmann R, Öchsner F., Sebald G. (Hrsg.), Springer Fachmedien, Wiesbaden, 2013, S. 174.

[36] Տե՛ս Kleine Anfrage der Fraktion der Linke, Konsequenzen aus der deutschen Mitverantwortung für den Völkermord an den Armeniern, Drucksache 16/4750, 19. 03. 2007, հասանելի է՝ http://dip21.bundestag.de/dip21/btd/16/047/1604750.pdf (մուտք՝ 15.08.2018):

[37] Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage (Drucksache 16/4750), Drucksache 16/4959, 03.04.2007, հասանելի է՝ http://dip21.bundestag.de/dip21/btd/16/049/ 1604959.pdf (մուտք՝ 15.08.2018):

Այն պետք է դառնար Հայոց ցեղասպանության հետազոտության կենտրոն: Կառավարության այս քայլը տեղավորվում էր 2005 թ. վերը քննարկված բանաձևի այն կետի շրջանակներում, որտեղ բարձր էին գնահատվում Յոհաննես Լեփսիուսի կյանքը և գործունեությունը, որն օրինակ կարող էր ծառայել եռակողմ հարաբերություններին[38]:

2010 թ.՝ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին, ձախերի խմբակցությունն իր երկու գրավոր հարցումներով պահանջեց անդրադառնալ, թե ինչ քայլեր են արվել Բունդեսթագի՝ «Հիշել և ոգեկոչել 1915 թ. …» բանաձևի ընդունումից հետո: Կառավարությունը պատասխանեց, որ թուրքական կառավարության հետ ոչ միայն երկկողմ զրույցների, այլ նաև ԵՄ անդամակցության բանակցությունների և ԵԱՀԿ շրջանակներում շեշտվում է խոսքի ազատության կարևորությունը երկրի ժողովրդավարացման գործընթացում[39]: Ձախերի խմբակցությունը հարցումով պահանջում էր նաև Գերմանիայի կառավարությունից պարզաբանել, թե արդյոք վերջինս կիսում է այն տեսակետը, որ 1915-1916 թվականների հայկական ջարդերը համապատասխանում են ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին հռչակագրին»[40]: Հարցի իրական բովանդակությունը շրջանցելով՝ կառավարությունը կրկին տվեց նույն պատասխանը. «Դաշնային կառավարությունը ողջունում է բոլոր ձեռնարկները, որոնք կծառայեն 1915-16 թվականների պատմական իրադարձությունների քննարկմանը: Այս ուսումնասիրությունների գնահատումը պետք է թողնել գիտնականներին: Միաժամանակ կառավարությունը այն կարծիքին է, որ 1915-16 թվականների աղետալի դեպքերի քննությունը առաջին հերթին երկու երկրների՝ Թուրքիայի և Հայաստանի խնդիրն է»[41]: Այս համատեքստում նկատելի էր, որ կառավարությունը մատնանշում էր 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի և Թուրքիայի ԱԳ նախարարների ստորագրած «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանա-

---

[38] Տե՛ս Antrag der Fraktionen SPD, CDU/CSU, BÜNDNIS 90/DIE GRÜNEN und FDP, Erinnerung und Gedenken an die Vertreibungen und Massaker an den Armeniern 1915 – Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen, Drucksache 15/5689, 15. 06. 2005, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de/doc/btd/15/056/1505689.pdf (մուտք՝ 15.08.2018):

[39] Տե՛ս Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage (Drucksache 17/687), Drucksache 17/824, 25.02.2010, հասանելի է՝ http://dip21. bundestag.de/dip21/btd/17/008/1700824.pdf (մուտք՝ 15.08.2018):

[40] Kleine Anfrage der Fraktion der Linke, Umsetzung des Bundestagsantrags 15/5689 „Erinnerung und Gedenken an die Vertreibungen und Massaker an den Armeniern 1915 – Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen“, Drucksache 17/687, 10.02.2010, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de/dip21/btd/17/006/1700687.pdf (մուտք՝ 15.08.2018):

[41] Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage (Drucksache 17/687), Drucksache 17/824, 25.02.2010, հասանելի է՝ http://dip21.bundestag.de/dip21/btd/17/008/1700824.pdf (մուտք՝ 15.08.2018):

գրությունները: Սակայն ձախերի կուսակցությանը չբավարարեց կառավարության հիմնավորումը: Որպեսզի հնարավորինս բացառվի խուսափողական պատասխանը, գրավոր նոր հարցման մեջ կառավարությունից հստակ պատասխան էր ակնկալվում Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի 1948 թվականի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» հռչակագրի կիրառման մասին, ինչպես նաև իրավական տեսանկյունից գնահատական տալու 1915-1916 թվականների հայկական ջարդերին[42]: Այս հարցի պատասխանը կարճ էր. «ՄԱԿ-ի 1948 թվականի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին հռչակագիրը» ուժի մեջ է մտել 1951 թ. փետրվարի 12-ին: Գերմանիայի Դաշնությունում այն ուժի մեջ է մտել 1955 թ. փետրվարի 22-ին: Հռչակագիրը հետադարձ կիրառելիություն չունի»[43]: Կառավարության այս պատասխանը սկզբունքորեն տարբերվում էր Եվրախորհրդարանի դեռևս 1987 թ. ընդունած բանաձևից, որտեղ նշվում էր, որ 1915-1917 թվականների ողբերգական իրադարձությունները համապատասխանում են ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» հռչակագրին[44]: ԵՄ անդամ պետություններում Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևերում նույնպես այն որակվում էր որպես վերջինիս համահունչ, ինչպես օրինակ՝ Բելգիայի սենատի 1998 թ. որոշումը[45], Շվեդիայի խորհրդարանի 2010 թ. բանաձևը[46]:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ՝ 2014 թ. դեկտեմբերին, Բունդեսթագի 18-րդ գումարմանը ձախերի խմբակցությունը կառավարությանը կրկին հղեց գրավոր հարցում՝ ամփոփելու 2005 թ. Բունդեսթագի ընդունած «Հիշել և ոգեկոչել 1915 թ. հայերի տեղահանությունները…» բանաձևի արդյունքները և քննարկելու Գերմանիայի Դաշնության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառումներին[47]: Սկզբունքորեն կառավարության պատաս-

[42] Տե՛ս Kleine Anfrage der Fraktion der Linke, Deutsche Mitverantwortung für den Völkermord an den Armeniern (Nachfrage zu Bundestagsdrucksache 17/824), Drucksache 17/1798, 19.05.2010, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de/dip21/btd/17/017/1701798.pdf (մուտք՝ 15.09.2018):

[43] Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage (Drucksache 17/1798), Drucksache 17/1956, 04.06.2010, հասանելի է՝ http://dipbt.bundestag.de/dip21/btd/17/019/ 1701956.pdf (մուտք՝ 15.09.2018):

[44] Տե՛ս European Parliament, Resolution on a political solution to the Armenian question, հասանելի է՝ http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/ resolutions/1987_07_20.pdf (մուտք՝ 15.09.2018):

[45] Տե՛ս Belgian Senat, Resolution 1-736/3 Concerning the 1915 Genocide of Armenians living in Turkey, հասանելի է՝ http://www.genocide-museum.am/eng/Belgium_Senate_ Resolution.php (մուտք՝ 15.09.2018):

[46] Տե՛ս Swedish Parliament Resolution, Armenian genocide resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.414/current_category.7/affirmation_detail.html (մուտք՝ 15.09.2018):

[47] Տե՛ս Kleine Anfrage der Fraktion der Linke, 100. Jahrestag des Völkermordes an den Armenierinnen und Armeniern im Osmanischen Reich, Drucksache 18/3533, 09.12.2014, հասանելի է՝ http://dip21.bundestag.de/dip21/btd/18/035/1803533.pdf (մուտք՝ 15.10.2018):

խանը նույնն էր. «Դաշնային կառավարությունը մնում է անփոփոխ իր այն տեսակետին, որ միասնական պատմության քննությունը Թուրքիայի և Հայաստանի խնդիրն է: Այդ պատճառով կառավարությունը ողջունեց 2009 թ. երկու երկրների միջև Ցյուրիխի արձանագրությունների ստորագրումը: Կառավարությունը աջակցում է 1915-1916 թվականների ողբերգական իրադարձությունների հետագա ուսումնասիրությունները, որոնց համար Գերմանիայի Դաշնության արտաքին գործերի նախարարության արխիվային փաստաթղթերը յուրաքանչյուրի համար հասանելի են»[48]:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին, երբ ավելանում էր այն պետությունների թիվը, որոնք պաշտոնապես ճանաչում էին Հայոց ցեղասպանությունը, գերմանական քաղաքականության դիրքորոշման մեջ քաղաքական բաղադրիչը շարունակում էր գերակայել: Այդ մասին են փաստում 2015 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձև ընդունելու շուրջ հնչեցրած հիմնավորումները՝ Արևմուտք-Ռուսաստան սուր հարաբերությունների ավելի սրման պարագայում Թուրքիայի դերը մեծանում է տարածաշրջանում[49], Թուրքիան հուսալի գործընկեր է «Իսլամական պետության» դեմ պայքարում[50], Հայոց ցեղասպանության ճանաչումը կարող է Թուրքիայի կողմից ընկալվել որպես կտրուկ քայլ՝ Թուրքիայում 2015 թ. հունիսին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախաշեմին[51]:

Հայաստանի և Թուրքիայի հարաբերություններին չմիջամտելու գերմանական դիրքորոշման վրա իր հերթին մեծ ազդեցություն ունեցավ նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ 2008 թ. մեկնարկած գործընթացը: Թեև արձանագրությունների վավերացումը հետագայում կասեցվեց, այնուամենայնիվ Թուրքիային հնարավորություն ընձեռվեց որոշ ժամանակ սառեցնելու այլ պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Ի վերջո, Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև Գերմանիայի օրենսդիր մարմնում ընդունվեց միայն 2016 թ., որը վերտառված էր այսպես. «1915 և 1916 թթ. հայերի և այլ քրիստոնյա փոքրամասնությունների դեմ իրագործված ցեղասպանության ոգեկոչումն ու հիշատակը»[52]: Փաստորեն, շուրջ հարյուր տարի պահանջվեց, որ Գերմանիայի խորհրդարանը ճանաչի Հայոց ցեղասպանությունը:

---

[48] Antwort der Bundesregierung auf Kleine Anfrage (Drucksache 18/3533) Drucksache 18/3722, 13.01.2015, հասանելի է՝ http://dip21.bundestag.de/dip21/btd/18/037/1803722.pdf (մուտք՝ 15.10.2018):

[49] Տե՛ս Gedenken an Armenier. Warum die Koalition nicht von Völkermord spricht, 05.04.2015, հասանելի է՝ http://www.welt.de /politik/deutschland/article139138385/Warum-die-Koalition-nicht-von-Voelkermord-spricht.html (մուտք՝ 15.10.2018):

[50] Տե՛ս Große Koalition streicht das Wort Völkermord, 01.04.2015, հասանելի է՝ http://www.zeit.de/politik/deutschland/2015-04/armenien-voelkermord-bundestag-tuerkei (մուտք՝ 15.10.2018):

[51] Տե՛ս Große Koalition will sich nicht mit Erdogan anlegen, Tagesspiegel, 01.04.2015,

[52] Գերմանիայի Բունդեսթագի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձև, 02.06. 2016, հասանելի է՝ http://www.parliament.am/library/cexaspanutyun/52.pdf (մուտք՝ 12.10.2020):

Այս քայլը մի կողմից ազդակ էր Թուրքիային, որ Գերմանիան անկախ է իր որոշումներում, մյուս կողմից, հաշվի առնելով Գերմանիայի դառը անցյալը, միջազգային հանրության առջև համամարդկային արժեքների դրսևորման միջոց:

Բանալի բառեր – *Հայոց ցեղասպանություն, ցեղասպանությունների ճանաչման հիմնախնդիր, հայ-գերմանական առնչություններ, Գերմանիա-Թուրքիա հարաբերություններ, Բունդեսթագի բանաձևեր*

МАРТИН ТОВМАСЯН – ***Обсуждение вопроса Геноцида армян во внутриполитической повестке Германии (1999–2015).*** – Статья посвящена признанию Геноцида армян законодательным органом ФРГ. Особый интерес придаёт этой теме тот факт, что Германия была союзником Турции во время Первой мировой войны. В этой связи возникает естественный вопрос, не разделяет ли Германия вину за преступление, совершённое её союзником. В статье высказано мнение, что это одна из возможных причин, которые долгое время удерживали Германию от признания геноцида. С другой стороны, Турция – один из важнейших экономических и политических партнёров Германии. Кроме того, в ФРГ живёт несколько миллионов турок. Понятно, что эти обстоятельства нельзя игнорировать. Однако Германия, признав ответственность за зверства во Второй мировой войне, и в вопросе Геноцида армян, не отступила от своей официальной политики. Следует учитывать при этом, что признание геноцида всегда фигурировало в повестке германо-армянских отношений.

Ключевые слова - *Геноцид армян, вопрос признания геноцида, армяно-германские отношения, германо-турецкие отношения, постановления Бундестага*

MARTIN TOVMASYAN – ***Discussions on the Armenian Genocide in the Domestic Policy Agenda of Germany in 1999-2015.*** – The article is dedicated to the study of the issue of the recognition of the Armenian Genocide in the German domestic political agenda. The article focuses on the discussions in the German legislature, as it is the most active German political body to discuss the issue of recognizing of Armenian Genocide and condemning genocides. The importance of the topic is further emphasized by the fact that Germany was an ally of Turkey during World War I, so the question arises as to whether Germany does not share the guilt of the crime committed by its ally. We believe that this is one of the possible reasons that has kept Germany from recognizing the Armenian Genocide for a long time. Turkey, on the other hand, is one of Germany's most important economic and political partners. There are several million Turks living in Germany: Germany cannot ignore these circumstances. However, it is a fact that Germany has honestly acknowledged the atrocities committed by it during World War II, a line that is now reflected in its official policy. Germany also has high-level relations with Armenia, and the issue of recognizing the Armenian Genocide has always been on the agenda of those relations.

Key words - *The Armenian Genocide, the issue of genocide recognition, Armenian-German relations, Germany-Turkey relations, Bundestag resolutions*